

ԲԱԽԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԽՏԱՆԳ ՈՐԴԻ ՌԻՄԵԿԱՅ ԵՒ ՆՈՐԱ ՏՈՀՄԸ

Բ.

Բայց ո՞վ է նա:

Բարեկամատաբար այս հարցի պատասխանը լիովին պարզում են մատենագրական և արձանագրական մի քանի ազբիւրներ. իջմիածնի մատենագրանում ունինք մի երկրորդ ձեռագիր, N 980 նժ., պատրաստուած նոյնանուն մի պատանի իշխանի համար, որ միայն Մատթէոսի աւետարանն է, կաշեպատ կազմով, $5,50 \times 7$ սմ. մեծութեամբ, զրուած լուս և պինդ մագաղթի վերայ, փոքր երկաթագրից բոլոր գրին անցնող ընտիր գրչութեամբ (պատկեր 8) (*). բնորոշ տառերից չ, զ, յ, չ երկաթագիր, իսկ ա, յ, ց, բոլոր գիր: Բուն գըրչութիւնը $5,1 \times 4,1$ սմ.: Ամբողջը 205 թերթից բաղկացած:

Սկզբում 1 ա. Մատթէոսի անդրին է, աւետարանը ձախ ձեռքով բռնած, իսկ աջը կրծքին դրած. յաջող մանրանկար է, բայց վատ պահուած. սկզբնազարդը վերելից ուղղանկիւն է, ներքելից բաց. Գ-ը մեծ ոսկեգիր, բայց խոնացած: Հատուածներն սկսում են կարմրագեղով, միջին բոլորածեւ երկաթագրով. լուսանցքին սովորական հիւսուածքի, եռատերեխի, իրար մէջ հազցրած սրտածերի մոտիւներով, ոսկի դաշտի վերայ: Բոլոր հատուածների գէմ զարդեր չկան. ամբողջը կարող և աղնիւ գրչի գործ է:

Ցիշատակարանից տեղեկանում ենք, որ զրուած է ամատթէոսեան աւետարանսի թիր. Չի՞ յամսիանս արեգ. Ի՞ր հրամանաւ բարիւրմատ և քաջցրամիտ պատրոնին . . . անկո (այսինքն Վախտանկա կամ Վալբրանկա, պակաս մասը քերուած է). որդո Ածասէր մեծ պատրոնին Ումեկին (այս անունն էլ թեթև քերուած, բայց նոյն զրերի վերայով տարբեր թանաքով նորոգած) և թռուին իշխանաց իշխանին ջալալին: ի վայելումն եւ ի պահպանութիր. անձին իւրօյ: և ի խրատ և ի վար-

ժումն մանկական տիոց իւրոց»: Դրուած էր և պատանի իշխանի մօր ոնունը, բայց անհարազատ ձեռքը ջնջել է և տեղը «Զուլու խաթուն» նշանակել:

Երկու ձեռագիրների ծագ-ժան մէջ եղած սերտ առն չութիւնը աչքի է ընկնում առաջին բոլութիւն. երկուսն էլ ստոցել է Պատրոնն վախտանց» որդի Ումեկի և պատանի հասակում. մէկն աւետարան է, նորա վարժութեան և գաստիարակութեան համար, միւսն էլ, մակաբերելի է, որպէս շարու հակութիւն աւետարանական ուսումնական Առաջինը զրուած է 1279 թուին, երկրորդը զրուած պիտի լինի նորանից ոչ շատ ուշ, հաւանօրէն 1280 թուին, յամենայն գէպս 1284 թուից առաջ, երբ նոյն վախտանգին յիշուած ենք տեսնում ուրիշ առթիւ, արգէն իրեւ մեկնաս. մենք կը տեսնենք, որ մինչեւ իսկ հիմունքներ ուշ նոյնք կուահելու, թէ ո՞րտեղ պէտք է զըրուած լինին այդ ձեռագիրները և թէ ինչո՞ւ պատանի Վախտանցը «պատրոն» է կոչուած: Խնդիրն աւելի ևս ակներեւ է զառնում, երբ համեմատում ենք երկու ձեռագիրների գիրն (*) ու արուեստը, որ կատարելապէս նոյն են, թէն աւետարանի մէջ զրիչը իւր անունն է յիշում՝ և եւ զգնողու զգարցան լիշմոն արժանի արարէք, իսկ Վախտանգի պատկերին կցուած մակագրութեան մէջ միայն ծնողների՝ Սարգիս և Թագուհի: Անշուշտ գրչի առնունը վերջին և մեծ յիշտակարանի մէջ կը լինէր, որ պակասում է այժմ:

Վախտանգի մասին աւելի մանրաւմասնութիւններ է տալիս Ցովհաննէս Երշակացին իւր Յաղագս երկնային շարժման աշխատութեան նախագրութեան մէջ (**), և ես նուաստ Ցոհ. Եզնկայեցի աշակերտ

(*) Համեմատել պէտք է պատկ. 8 և 1, 4 եւն.

(**) Տպագրուած է «Տետրակ համառօտ եւ լիմասոնախոն բանիւր» վերհազրով, 1792 թուին Ն. Նախիջեւնում, Յովսէփ արքեպիսկոպոս Արդութեանի հրատարակութեամբ: Մենք օգտագում ենք լիչմ. N 2173 ձեռագրից, 150աւ:

(*) Մեզի զրկուած լուսանկարներու մէջ կը պակսի թիւ ութը,

հոգելից հօրն և սր. վղին. Վղաճ, սպասաւոր սր. գրոց բանի: ի թու. ԶԼԴ. պատահեաց զալ ի կողմանս Ածապահ թղրւթես. աշխարհիս վրաց, ի հոչակաւոր և ի մեծ մայրաքաղաքն ի Տփիսիս, Փայտակարան կոչեցեալ ի զիրս պատմողաց: Եւ հանդիպեցաւ խօսել մեզ բան քարոզութե. ի զուռն եկեղեցյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան հայոց պր. Քարիմատինին, զոր շինեալ էր Ածասէր և բարիսկի հայրն նորա պր. Ոմեկն: և էր խօսեցեալ բանն Յղոս. երկնակին չարժմանն, զս. որոյ ախորժելի եղեւ զուարթամիտ պատանոյն Վախթանգա, որ էր որդի կրտսեր հոչակաւոր անուան պր. Ոմեկին, և մայրենի ազգաւ թոռն մեծ իշխանին Զալալի տն. Խաչենոյ, որդի մօր բարեպաշտի, որ էր Քի. օրինօքն զարդարեալ հոգի, և ի խնդիր բանիս յօրդորող զորդի. սա խնդրեաց ի մէնջ յզգո. երկնի և նորին չարժմանն: յոր հարկեալ յարդորեաց զտկարութիս մեր մեծազգ եպն տր. Յոհ. ազնուական զարմից եւ բարէտոհմիկ հարց ծնունդ. որ և չարժեալ ի սիրոյ և ի յուսոյ խնդրողաց և ակնառնեալ ի պատուոյ շնորհաշուոք տն., և զերապատիւ եկեղեցոյ գլխոյն, ի նրբաշաւիլ և ի կորթվամիտ բանից սր. հարցն եւ վկտաց մերոց. և իմաստախոն արանց պարզեալ, զըեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք զս. դիւրաւ հոսկանալի լինել ընթեցողաց:

Հայ գիտնական Մելքիսեդրէգով պարզել է, որ Երզնկացու Նախաղրութեան մէջ ակնարկուած եկեղեցին Մայդանի Ս. Գէորգ, Կաթողիկէ կամ Բերզի մեծ եկեղեցին է^(*), և որովհետև «պատրոն» է կոչուած Վախտանով, կարելի է եղբակացնել, որ երկու ձեռագիրներն էլ զրուած են այստեղ^(**): Նախաղրութեան մէջ յիշուած

(*) Bulletin de l'Institut Caucasiens d'hist. et d'archéologie. III. 1925. p. 49. ռեւսերէն:

(**) ԺԴ. զարում «պատրոն» բառը յատկացուած էր եկեղեցիների շինող կամ հովանակուր իշխաններին, բնականաբար եւ նրանց անմիջական ժառանգներին. «պատրոն» էին կոչուած նաեւ զերազա իշխանները կամ թագաւորները իրենց ենթարկուած իշխանների նկատմամբ. տ. մեր «Փաղբակեանը կամ Պողոսանը», 1928. եր. 71: Երբորդ՝ մասնաւոր նշանակութեամբ բիշ յետոյ:

«բարէտոհմիկ հարց ծնունդ» Յովհաննէս եպիսկոպոսը Հաղբատի Պոփեան նշանաւոր եպիսկոպոսն է, ԺԴ. զարում նոյնանուուն երրորդը, Համաղասպի յաջորդը. յաճախ յիշատակուած Հաղբատի եւ չըակայցքի արձանագրութիւնների մէջ, ինքն էլ նշանաւոր շինարար, զրութեան և զիսութեան հովանաւոր: Նա է կանգնել Հաղբատի Ամենափրկիչ կոչուած փառաւոր խաչարձանը, զարդարուած հետաքրքրական պատկերագանգակներով, շինել «ըզգը զրքատուն և զօրահն նորին», կազմել է տուել «զմեծածախ պահարանն Բրդածորյա», ևն. (*): Ժամանակակից և զործակից Սաղացն աթարէզ մեծ իշխանի, որ Մահկունաբերդի իշխանապետն էր, Հաղբատի հովանաւոր տէրը, հաւոհորէն եւ Տփիսիս ամիրան, ինչպէս նորա նտխնին Քուրդ իշխանը, որ Վրաց Գէորգի III-ի, Թամարի հօր օգնականն ու զինակիցն էր ընդդէմ Օրբէլեանների ապստամբութեան^(**): Յովհաննէս եպիսկոպոսի ներկայութիւնը Տփիսիսում իրեւ Հաղբատի և Մահկանաբերդի եպիսկոպոսի, միանգամայն հասկանալի է. այդ կապը պահւում էր Հաղբատի և Թիֆլիսի մէջ մինչեւ ԺԲ. զարուգերչիրը:

Պ.

Գանձասարի երկու արձանագրութիւնները աւելի եւս պարզում են Վախտանգի անձնաւորութիւնը եւ ընդարձակում մեր տեղեկութիւնները նորա ազգակցական կապերի մասին: Մամախաթուն և իւր պատրոն Ճարբ Զժէ = 1268 թուին միարանում են Գանձասարի սուրբ ուխտին և ստանում բարոր եկեղեցիների պատարազը աւագ հինգշաբթի պատրոն Աւմեկի համար^(***): Այս Մամախաթունը, որ ինչպէս կը տեսնենք, Վախտանգի մոյրն է, իւր հետ ուխտի եկած Ճարբին «պատրոնն իմ» է անոււնած. Հարբարազի բարբառով, որի մասն է և Կա-

(*) Զալալիան. Ա. 70: Երզնկեան, «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ», Վաղարշապատ, 1886. 43: Ատոզել ենք եւ Խաչարձանը լուսանկարել անձամբ:

(**) Մեր «Խաղբակեանը», եր. 5-6:

(***) Զալալիան. Ա. 191:

չենք, մինչև այժմ էլ «պատրուն» նշանակում է սկեսրայը հարսի համար. Աւմեկի մի ուրիշ որդու՝ ձարի արձանագրութիւնից էլ Գիտկայ վանքում կը տեսնենք, որ Աւմեկի հօր անունը, յիբաւի, ձար էր: Մի պատրոն ձար» Ո՞՛՛. = 1202 թուին մի խոչ է կանգնել ձահուկի Ապարաներ կոչուած քաղաքանեղում, հաւանորէն, նոյն Աւմեկի նոյնանուն հօր հետ (*): Այս արձանագրութիւնից պարզ է նոյնպէս որ 1268 թուին Աւմեկ արգէն մեռած էր, և ուրիմ կողմանի կերպով ունինք նորա թիվիսում շինած նեկեղեցու terminus post quem-ը, որ ըստ պրոփ. Յովաչի Օբրելու 1251 թուին պիտի նշանակել շինութիւնը արտական արձանագրութեան մնացորդի հիման վերայ (**) :

Իսկ թէ Մամախաթունը Աւմեկի կինն էր, Զալալ Խաչենեցու տղջիկը և Վախտանգի մայրը՝ պարզում է նոյն վանքի մի երկրորդ արձանագրութիւնից. «ԶԼԵ» թը-ւականին «Նուաստ աղախին Քրիստոսի Մամախաթուն գուստը ինքնակալ իշխանաց իշխանին Զալալ Գուլայ Հասանին տեսան Խաչենը և բարեկացած մաւր իմոյ Մամախանին և ամուսին մեծ պարօնին Աւմեկին» մեծ յուսով ուխտ է գալիս Գանձասարի վանքը իւր Վախտանգ որդու հետ և միաբանները խոստանում են Վարդավագուի տօնի պատարագը հօրն ու մօրը՝ քանի ինքը կենդանի է, մահուանից յետոյ իրեն (***):

Ինչո՞վ նշանաւոր հանդիսացաւ կեանքի մէջ ազւարթամիտ» և զբասէր Վախտանգը, ոչինչ յայտնի չէ. գիտենք միայն, որ նա վախտանուած է 1244 թուին և թաղուած Վայոց Զորի եղեգիս աւանում, որ Օբրելեանների իշխանութեան կեղրուններից մէկն էր, փոխանակ իւր հօր շինած եկեղեցու հովանու տակ կում Գիտկայ վանքում, որ իւր եղբօր ձարի գերեզմանառուն էր: Եղեգիսում թաղուելու հանգամանքն անյայտ է, բայց, զուցէ, կարելի

է բացատրել նորանով, որ ազգակցական կապիր ունէր Օբրելեանների հետ. Վախտանգի մօրաքոյը Մինախաթուն՝ Տարսային Օբրելեանի երկրորդ կինն էր, Ստեփանոս Օբրելեանի խորթ մայրը (*), նորա գերեզմանի արձանագիրն է.

+ Թվին 27.Դ. Այս և հանգիս պարունակարանին որդոյ պարունականին (**):

Վախտանգի անուան հետ կապուած մեզ յայտնի թուականների հիմոն վերայ կարող ենք, զրեթէ, ճշգութեամբ, որոշել և նորա կեանքի տեսողութիւնը. հօր մահը տեսանք, մօտաւորապէս, 1268 թուին. Վախտանգը պիտի ծնուած լինի այդ թըւականից առաջ, բայց ոչ շատ առաջ. նորա աւետարանը գրուած է 1279 թուին և ի խրատ եւ ի վարժումն մանկական տիոց իւրոց». առաքելական թղթերն էլ հաւանորէն 1280 թուականին, որին ապացոյց նորա պատաննեկան մտնրանկարը, մօտաւորապէս 15 տարեկան: Զորս ատարի յետոյ ևս Երզնկացին նորան անուանում է «զըւաթամիտ» պատանի, ուրեմն եւ ոչ մեծ քան 18-9 տարեկան մեր հաշուով: Այս տուետներով նորա ծնունդը պիտի նշանակել 1265-1268 թ., թ., որով և մեռած պիտի համարել 76-80 տարեկան հասակում:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊՈ. ՅՈՎՈՒԺԵԱՆ

Շարունակելի

ԽՈԲՀՈՒՐԴ ԵՒ ԽՈՍՔ

Հանոյիը կրնայ ցնորմերու վրայ հաստուիլ, բայց երշանկուրիմնը կը հանգչի նշմարութեան վրայ:

*

Ամեն նշմարութիւն յարմար չէ ըսկու, ապայի միշ յաւ և լսելու համար:

(*) Ալիշան, Սիսական, 370. «Թվ. Ո՞՛՛. կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն պատրոն ձարին. յիշեա Քրիստոս Աստուած և ողորմեա»:

(**) X. B. 1918. 198-199. Fragment krestnawo kamnia s arabskoi nadpisj w Tiplise:

(***) Զալալեան. Ա. 186-7:

(*) X. B. 1913. 216. մեր յօդուածը Potomstwo Tars'aica:

(**) Ալիշ. Սիսակ, 149: